հաստատելու գործին։ Տարաբաղդաբար այն արձանագրությունները, որոնք կապված են Գրիգոր Խաղբակյանի անվան հետ, պակասավոր են կամ յեղծված, ուստի և լիովին գաղափար չենք կազմում իշխանի առատաձեռնության և շինքի մասնակցության չափի մասին, բայց նշանակված պատարագների թիվը ցույց է տալիս, որ նորա ոժանդակությունը մեծ եր. ինչպես ել լինի, այս վանքը շինված է նորա իշխանության առաջին տարիներում, և պետք է Խաղբակյանց ստեղծագործություններից մեկը համարել, թեև վատ վիճակի մեջ հասած մեզ (պատկ. 19)։ Գրիգոր Խաղբակյանի անունով մեր ձեռքը յերկու մեծ արձանագրություններ հասել. դոցանից մեկը զետեղված է բնականաբար ամենապատվավոր տեղում՝ դրան կամարակալ քարի վերա, ուր և գտնվում է վերջին դատաստանը ներկայացնող նուրբ բարձրաքանդակ խմբանկարը. այս արձանագրությունը համեմատաբար լավ է պահված, բայց յեղծված են և հաղիվ նկատելի ՈԿԹ թվականի տասնավորն ու միավորը, ինչպես և կրճատված **թվ.** բառի առաջին տառը։ Արձանագրության մեջ նա հայտնում է, թե «աւգնեցի եկեղեցոյս բաղում արդեամբք», որի համար և սպասավորները նշանակել են աւագ խորանի «Ե։ շաբաթ եւ շաբաթ աւրն հանապազ»։ Սույն արձանագրության կցված է անմիջապես մի յերկրորդը, սակայն առաջին տողերի սկիզբը շատ մաշված և միայն աղոտ կերպով ընթեռնելի **«ամուսին Գրիգորոս»** բառերը. նա տալիս է «զսբ նշան յեկեղեցիս եւ այլ բաղում [արդիւնս] .....։ Բարեբաղդաբար մի ուրիշ արձանագրություն, դրան աջ կողմի պատի վերա, պարզում է, թե ո՞վ եր Գրիգորի ամուսինը. «Ես Զազա (թէ՞ Զազս) մայր Վասակայ եւ կողակից Գրիգորոս աւգնեցի տան[ս եւ ետու սպ]ասն պատուական ...»*, որի համար և սպասավորները պատարագ են նշանակում «Վարդավառին շաբաթն աւրն եւ կիւրակէ»։ Քիչ հետո կտեսնենք, որ Գրիգոր Խաղբակյանն ուներ մի որդի Վասակ անունով, և ուրեմն, «մայր Վասակայ եւ կողակից Գրիգորոս» Զազան վոչ այլ վոք է, բայց յեթե Գրիգոր Խաղբակյանի ամուսինը. «մայր Վասակայ» է կոչված այն պատճառով, որ արձանագրությունը գրված է ամուսնու մահվանից հետո։ Գրիգոր Խաղբակյանը մի ուրիշ արձանագրություն ունի տաճարի հարավային պատի վրա դրսից, յերկրորդ լուսամտի (դեպի արևելք) աջ կողմից, որից յերևում է, թե մի «մեծ հող» է նվիրել «եւ այլ արդիւնք». արձանագրությունը շատ մասերով փչացած է։

Գրիգոր Խաղբակյանի որդին եր Վասակ, որ արդեն հիշատակված տեսանք մոր արձանագրության մեջ. բայց նա ինքն ունի յուր արձանագրությունը, տարաբաղդաբար յեղծված և վերջին կետն իսպառ անընթեռնելի։ Բուն տաճարի հյուսիսային պատին կցված

Աղջոց վանք. Պողոս և Պետրոս առաքյալները. **Պատկեր 25.**

* Փակագծի մեջ առնված մասերը մենք ենք լրացրել. այս և հիշատակված արձանագրությունների ամբողջությունը տես Մասն Բ. գլ. Գ։